

Հետաքրքիր Է հիմնալ

1. Հասուն մարդու սիրտը հանգստի վիճակում զարգացնում է 3,3 Վտ հզորություն: Իսկ 1 օրում սիրտը կատարում է նույն աշխատանքը, ինչ վերամբարձ կռուկը 1 տ զանգվածով բռնը մոտ 29 մ հավասարաչափ բարձրացնելիս:

2. Հնում, երբ դեռ չէին հորինվել տարբեր սարքեր և մեքենաներ, մարդու հիմնական օգնականները ձիերն էին: Այդ իսկ պատճառով փորձում էին ցանկացած մեքենայի կամ սարքի աշխատանքը համեմատել որոշակի քանակությամբ ձիերի աշխատանքի հետ: Այստեղից ծագեց հզորության չափման «ծիաուժ» միավորը, որն օգտագործվում է մինչ այսօր: Ուատտը փորձնական ճանապարհով բացահայտեց, որ ձին 75 կգ զանգվածով բռնը 1 վ-ում հանքահորից բարձրացնում է 1 մ: Դրա հիման վրա գյուտարարը տվեց ծիաուժի (ծ.ու.) և վատտի կապը՝

$$1 \text{ Չ.ու.} = \frac{A}{t} = \frac{mgh}{t} = \frac{75 \text{ կգ} \cdot 9,8 \frac{\text{Ն}}{\text{կգ}} \cdot 1 \text{ մ}}{1 \text{ վ}} = 735 \text{ Վտ}$$